2/26.5/403

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«22» 01 2021թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

**ԲՓ0020-21**

***Ձեռնարկողը՝*** ***«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ***
*ք. Գյումրի,Վարդանանց հր.1*

***Գործունեությունը՝*** ***Արթուր Ալեքսանյանի անվան հունահռոմեական ըմբշամարտի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
*Շիրակի մարզ*

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Գևորգյան

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
թիվ ԲՓ 0020-21
«22» 01 2021թ.

# *Արթուր Ալեքսանյանի անվան հունահռոմեական ըմբշամարտի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ*

| | |
|---|---|
| Ձեռնարկող՝ | «ՍԱՐԳԻՍ ԵՎ ՄԱՐԻԱՆՆԱ» ՍՊԸ |
| Փաստաթղթի տեսակը՝ | Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ |
| Գործունեությունը՝ | «Գ» կատեգորիա |
| Տեղադրման վայրը՝ | Շիրակի մարզ, Գյումրի համայնք |

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 6-րդ մասի, 7)-րդ կետի ա. ենթակետի՝ Արթուր Ալեքսանյանի անվան հունահռոմեական ըմբշամարտի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցումը որպես քաղաքաշինության բնագավառի գործունեություն դասակարգվում է որպես «գ» կատեգորիայի գործունեության տեսակ:

***Ներածական մաս*** Գործունեության նպատակն է Գյումրի քաղաքի Մ. Խորենացու փողոց 50/5, 50/6, 50/7 հասցեներում կառուցել հունահռոմեական ըմբշամարտի ժամակակից մանկապատանեկան մարզադպրոց: Մանկապատանեկան մարզադպրոցի կառուցման նախագծային աշխատանքների համար հիմք է հանդիսացել Գյումրի համայնքի ղեկավարի կողմից 2020 թվականի ապրիլի 9-ին տրված թիվ 62 նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանք/: Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, իսկ գործառնական նշանակությունը, կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման: Հողատարածքը բաղկացած է 3 հողակտորից, ընդհանուր մակերեսը կազմում է 9.9595 հա: Տարածքի ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են 1580,0-1586,0 մետրերի սահմաններում:

***Նկարագրական մաս*** «Արթուր Ալեքսանյանի անվան հունա-հռոմեական ըմբշամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի մարզադպրոցի կառուցման համար նախատեսված հողատարածքը ազատ է կառուցապատումից, գտնվում է բնակելի և հասարակական շենքերի հարևանությամբ: Կառուցաապատվող հողամասը հարթ է, քարքարոտ, զուրկ ծառաթփուտային բուսականությունից: Տեղ-տեղ հանդիպող հողային ծածկույթում բուսահողի հզորությունը կազմում է 15-ից 20սմ: Մարզադպրոցի բաղկացած կլինի հետևյալ հիմնական կառուցներից՝ հյուրանոցային և սպորտային մասնաշենքեր, մարզադաշտ և տրիբունա:

Հյուրանոցային մասնաշենքն իրենից ներկայացնում է 3 ամբողջական հարկով և մեկ կիսատ հարկով շինություն, որտեղ կտեղակայվեն ընդհանուր՝ 109 տարբեր մակերեսներով համարներ: Այն կներառի նաև ճաշարան, ժամանցային սրահ /բաղկացած՝ բիլիարդի և սեղանի թենիսի, համակարգչային և սեղանի խաղերի սրահներից/, սրճարան և շոգեբաղնիք: Համահարթեցման նիշից առավելագույն

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

բարձրությունը կազմում է 15,1 մ: Հյուրանոցային համալիրի կառուցապատման մակերեսը կազմում է 3330 մ²: Սպորտային մասնաշենքը բաղկացած կլինի նախասրահից, 1044 նստատեղով մրցումային սրահից, 2 հանդերձարաններից, ծանրամարտի սրահներից, բաղկացած՝ 8 ծանրամարտի հարթակներից, 300մ² մակերեսով մարմնամարզության սրահից, 1220 մ² մակերեսով ըմբշամարտի դահլիճից և մերսման սրահից՝ բաղկացած մերսման սենյակից, շոգեբաղնիքից: Բոլոր սրահները ներառում են՝ հանդերձարաններ, հանդիսատեսին սպասարկող սանհանգույցներ, պահեստային տարածքներ, որոնցում նախատեսված է նաև հաշմանդամություն և սակավաշարժություն ունեցող անձանց համար մատչելիության պայմաններ: Վարչական մասը գտնվում է երկրորդ հարկում: Սպորտային մասնաշենքի կառուցապատման մակերեսը կազմում է 5375 մ²: Շինությունների հիմնական հարդարումն իրականացվում է 2 քարերի /սպիտակ չհղկված տրավերտին և սև տուֆ/ համադրման միջոցով, իսկ որմնախարիսխը երեսպատված է բազալտե սալերով:

Մարզադաշտն իրենից ներկայացնում է 105x68 մ գծանշման չափսերով ֆուտբոլի դաշտ, պարփակված 9 գծից բաղկացած վազքուղով: Դաշտի հատակը իրականացված է խոտածածկով, իսկ վազքուղին իրենից ներկայացնում է օվալաձև ռետինե հատակով տարածք, որի տակ իրականացված է նաև ե/բետոնե նախաշերտ:

Տարածքում նախատեսված է նաև կաթսայատուն և ենթակայան: Տարածքի ամբողջ պարագծով նախատեսվում է իրականացնել 6282 գծ.մ երկարությամբ ցանկապատ բազալտե սալերով և 1667գծ.մ երկարությամբ մետաղական ցանկապատ: Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է կառուցապատումից ազատ՝ 39560 մ² մակերեսում իրականացնել տարածքի կանաչապատում:

Մարզադպրոցի ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից տրվող տեխնիկական պայմանի համաձայն: Սառը ջրի սնուցումը կիրականացվի սպորտ-համալիրի Ø200 ջրագծից՝ Ø150մմ խողովակով: Կենցաղային կեղտաջրերը սան-սարքերից ինքնահոս կհավաքվեն և ներքին ցանցի միջոցով՝ Փ150 խողովակներով կհեռացվեն բակային ցանց:

Տաք ջրամատակարարումը նախատեսված է մարզադպրոցի բակում կառուցող անհատական կաթսայատան միջոցով՝ Փ108 և Փ80 տաք ջրի շրջապտույտի խողովակով: Կաթսայատանը տեղադրվելու է 2 հատ ավտոմատացված ECOMAX Q=426 կՎտ հզորությամբ ջերմային կաթսաներ: Մարզադպրոցի գազամատակարարումը՝ համաձայն Շիրակի մարզի ԳԳՄ-ի կողմից 02.03.2020թ. տրված NUա01.12/35 գրության, իրականացվելու է Մուշ 2 թաղամասը սնող՝ d=219մմ միջին ճնշման ստորգետնյա գազատարից:

Մարզադպրոցի շինարարական աշխատանքները նախատեսվում է իրականացնել 30 ամսում, որից հողային աշխատանքների տևողությունը կկազմի 2 ամիս: Հողային զանգվածների ծավալները ներառում են *68000* մ³ ծավալով հանույթ, 33000 մ³ ծավալով հետլիցք: Ավելացած հողային զանգվածը և շինարարության ընթացքում առաջացող շինաղբը՝ 3956 մ³ ծավալով, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կտեղափոխվի Գյումրիի քաղաքապետարանի կողմից օրենքով հատկացված վայր: Հողային աշխատանքներից առաջացող բուսահողի ծավալը հողամասում գնահատվել է մոտ 4800 մ³: Այն պահեստավորվելու է հատուկ նախատեսված վայրում, հետագայում օգտագործվելու է կանաչապատման աշխատանքներում:

Շինարարական աշխատանքների ընթացքում օգտագործվող շինանյութը կպահեստավորվի շինհրապարակում, հատուկ նախատեսված վայրում, ծածկի տակ: Շինհրապարակում չի նախատեսվում հեղուկ վառելանյութերի պահեստավորում, կամ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

շինարարական տեխնիկայի կայանում: Տեխնիկական միջոցների վառելիքով լիցքավորումը և յուղումը նախատեսված է իրականացնել շինհրապարակից դուրս՝ լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Բետոնախառնուրդի մատակարարումը կիրականացվի մասնագիտացված ընկերության կողմից՝ ավտոբետոնախառնիչով:

Շինարարության ժամանակ ջրամատակարարումը կիրականացվի գոյություն ունեցող ջրատարից: Ջուրն օգտագործվելու է տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար: Ջրցանի ջուրը կմատակարարվի ջրցան մեքենաներով: Ընդամենը ջրօգտագործումը հաշվարկվել է 1752.42 մ³/շին. ժամ: Աշխատողների կենցաղային կեղտաջրերի հեռացման համար շինհրապարակում ժամանակավոր կտեղադրվեն սանհանգույցներ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Շինարարության ժամանակ շինհրապարակից առաջացող հոսքաջրերը և անձրևաջրերը նախատեսված է ուղղել շին. հրապարակին կից տարածքում տեղադրվող՝ 25մ³ ծավալով պարզարան /տարողություն/, որտեղ մեխանիկական նստեցումից հետո, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

Շինարարական աշխատանքների ընթացքում հիմնական ռիսկերը կապված են հողային ծածկույթին հասցվող վնասի և արտանետումների հետ: Արտանետումները կարող են առաջանալ հիմքերի փորման ընթացքում՝ փոշու արտանետումներով և շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ՝ դիզելային վառելիքի արտանետումներով: Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար կարևորվում են՝ շինարարական աշխատանքների ընթացքում ջրցանի իրականացումը և շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի կարգաբերումը:

Հողային ռեսուրսների պահպանությանն ուղղված միջոցառումները ներառում են՝

- Շին. աշխատանքների ընթացքում հողերի որակի մոնիթորինգի իրականացումը,
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող շինարարական թափոնների պահեստավորումը, կամ շինանյութերի տեղադրումը հատուկ նախատեսված վայրում՝ ծածկի տակ,
- աշխատանքների ավարտից հետո խախտված տարածքների վերականգնումը և առաջացած շինարարկան թափոնների և աղբի տեղափոխումը տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված վայր,
- Հողի բերրի շերտի հանումը և նորմերին համապատասխան պահպանումը՝ բացառելով շինարարական աշխատանքների հետևանքով դրա աղտոտումը
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքը կանխարգելելու համար՝ սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակի ապահովումը:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է 39560 քմ մակերեսում իրականացնել տարածքի կանաչապատում: Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմանների բնորոշ ծառաթփային բուսականությամբ: Կանաչապատման համար հայտով նախատեսված են հետևյալ ծառատեսակները՝ փռվող գիհի, սյունաձև տոպա, գնդաձև ակացիա, արծաթափայլ եղևնի, թղկի, բարդի, հուդայածառ: Կանաչապատումը կիրացվի նաև թփերով և ծաղկասածիլներով:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Կանաչ տարածքների, մասնավորապես՝ ծառատեսակների ոռոգման, համար կնախատեսվի կաթիլային ոռոգման համակարգ, իսկ տարածքի ամբողջական ոռոգումը կկազմակերպվի ռետինե խողովակներով: Կանաչապատ տարածքների ոռոգման ջրապահանջը հաշվարկվել է 83076 մ³/տարի, որը կմատակարարվի հատուկ ավտոմեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով:

Հայտում նախատեսվել են միջոցառումներ, ուղղված՝ շինարարության ընթացքում առաջացող թափոնների կառավարմանը, աղմուկի և թրթռման մակարդակների նվազեցմանը, արտակարգ իրավիճակների կանխարգելմանը և աշխատողների անվտանգությանը:

Շինարարության ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ /օդի, հողի աղտոտվածություն, աղմուկ, թրթռում, ծառերի կպչողականություն և այլն/: Բնապահպանական միջոցառումների իրականացման համար նախատեսվել են ծախսեր, որոնք շինարարության ժամանակահատվածի համար կկազմեն 1050 հազ. ՀՀ դրամ: Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառված են շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվեն շինարարական կազմակերպության կողմից:

**Պատճառաբանական մաս** նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Գյումրի քաղաքում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, արտակարգ իրավիճակների, պաշտպանության նախարարություններից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել Հայտի լրամշակումներում:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

## Փորձաքննական պահանջներ

1. Մանկապատանեկան մարզադպրոցի կառուցման ընթացքում պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2018 թվականի հոկտեմբերի 27-ի N 25-Ն հրամանով հաստատված «Մանկապատանեկան մարզադպրոցների տեղակայմանը, կառուցվածքին և շահագործմանը ներկայացվող պահանջներ» N 2.1.2.002-18 սանիտարական կանոնների պահանջները:

2. Շինարարության ընթացքում որպես պարտադիր պահանջներ, անհրաժեշտ է՝

- պարսպապատել շինարարական հրապարակը,
- շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,

ՀՀ ԲՆՈՒՍԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԷԿՈՊԵՐՏԻԶԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ * РА ЕРЕВАН "ЭКОПЕРТИЗЫ ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ" ГНО * RA YEREVAN "ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER" SNCO
02543163
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

3. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների և մնացորդային գրունտի հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Գյումրու քաղաքապետարանի հետ համաձայնեցված:

4. Տարածքի կանաչապատման աշխատանքներն իրականացնել Գյումրու քաղաքապետարանի կողմից հաստատված կանաչապատման նախագծի համաձայն, որպես խնամքի պարտադիր միջոցառում ապահովել կանաչ տարածքների ոռոգումը:

5. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

## ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Արթուր Ալեքսանյանի անվան հունահռոմեական ըմբշամարտի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխավոր մասնագետ՝ Հ. Մկրտչյան